ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Վերականգնողական ծառայությունների կայուն ֆինանսավորում և ծառայությունների պատվիրակման մեխանիզմների զարգացում քրեակատարողական և պրոբացիայի համակարգերում

Սույն փաստաթուղթը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում *«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի և Սոցիալական արդարություն ՀԿ-ի* կողմից իրականացվող *«Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտներում վերականգնողական ծառայությունների կայուն ֆինանսավորում և ծառայությունների պատվիրակման մեխանիզմների ամրապնդում»* ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «*Քաղաքացիական հասարակության ինստիտուտ*» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
2. ԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....5
2.1 Ծառայությունների հասանելիության և ծածկույթի խնդիր.....5
2.2 Ծառայությունների շարունակականության խնդիր.....6
2.3 Ֆինանսավորման և բյուջետային տեսանելիության խնդիր.....6
2.4 Կառավարման, պատվիրակման և որակի վերահսկման խնդիր.....7
3. ԻՆՉՈՒ՞ Է ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒՄԸ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԼՈՒԾՈՒՄ.....7
4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....10
5. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....13
6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....14
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.....15
ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ.....16
1) «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ (*ՔՀԻ*).....16
2) «Սոցիալական արդարություն» ՀԿ / «Ջուրեմոնիա» հարթակ.....16

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն համառոտագիրը հիմնվում է քրեակատարողական և պրոբացիայի համակարգերում վերականգնողական ծառայությունների հասանելիության, ֆինանսավորման և պատվիրակման հնարավորությունների նախնական վերլուծությունների և հրապարակումների հիման վրա, որոնք կատարվել են Ջուրեմոնիա ծրագրի շրջանակներում[1] Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Սույն փաստաթուղթը նպատակ ունի ներկայացնել ոլորտում առկա հիմնական խնդիրները, դրանց համակարգային պատճառները և պետական բյուջետային ու ծառայությունների պատվիրակման գործընթացներում հնարավոր լուծումները:

Հայաստանի քրեակատարողական և պրոբացիայի համակարգերում վերականգնողական, վերասոցիալականացման և համայնքային վերաինտեգրման ծառայությունները դեռևս չունեն բավարար չափով համակարգային, կանխատեսելի և արդյունքահեն ֆինանսավորման մոդել: Առկա ծառայությունների ծավալը, աշխարհագրական հասանելիությունը, շահառուների ընդգրկումը և շարունակականությունը բավարար չափով տեսանելի չեն պետական բյուջետային և ծրագրային փաստաթղթերում, ինչը դժվարացնում է դրանց պլանավորումը, գնահատումը և երկարաժամկետ ինստիտուցիոնալացումը: Այդ ճանապարհին առաջնային է դիտարկվում վերականգնողական ծրագրերի վերաբերյալ հստակ վիճակագրության վարումը, դրա հիման վրա պետական բյուջեի պլանավորումը: Ներկայում Հայաստանի քրեակատարողական և պրոբացիայի համակարգերում վերականգնողական, վերասոցիալականացման և համայնքային վերաինտեգրման ծառայությունները շարունակում են մնալ մասնակի, անհավասարաչափ հասանելի և հաճախ՝ դոնորային կամ առանձին ծրագրային աջակցությունից կախված: Թեև վերջին տարիներին ոլորտում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, այդուհանդերձ, վերականգնողական ծառայությունների ֆինանսավորումը դեռևս բավարար չափով տեսանելի, հասցեական և արդյունքահեն չի ներկայացված պետական բյուջետային և ծրագրային փաստաթղթերում: Միաժամանակ, ծառայությունների պատվիրակման մեխանիզմները չեն զարգացել այն աստիճան, որ հնարավոր լինի համակարգված կերպով ներգրավել մասնագիտացված քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և այլ համապատասխան ծառայություն մատուցող կառույցներին:

Այս իրավիճակում անհրաժեշտ է, որպեսզի վերականգնողական ծառայությունները դիտարկվեն ոչ թե որպես լրացուցիչ կամ երկրորդային բաղադրիչ, այլ որպես արդարադատության ոլորտի արդյունավետության, հանրային անվտանգության, կրկնահանցագործության նվազեցման և մարդու արժանապատիվ վերաինտեգրման կարևոր նախապայման: Մասնավորապես միջազգային ստանդարտները, այդ թվում Նելսոն Մանդելայի կանոնները, ԵԽ և ՄԱԿ-ի համապատասխան հանձնարարականները և ուղեցույցները հստակ հաստատում են այս մոտեցման անհրաժեշտությունը (Nelson Mandela Rules[2], Tokyo Rules[3], Bangkok Rules[4], Council of Europe Probation Rules[5]): Այսպիսով, այս մոտեցումը համահունչ է միջազգային չափանիշներին, ըստ որոնց *«ազատությունից զրկման և այլ քրեական պատիժների կատարումը չպետք է*

[1] https://juremonia.am/
[2] https://www.unodc.org/unodc/en/justice-and-prison-reform/nelsonmandelarules.html
[3] https://digitallibrary.un.org/record/105347?v=pdf
[4] https://library.prison-officers21.org/wp-content/uploads/2023/02/BangkokRules-Updated-2016-with-renumbering-SMR.pdf
[5] https://search.coe.int/cm?i=09000016805cfbc7

սահմանափակվի միայն հսկողությամբ կամ մեկուսացմամբ, այլ պետք է ուղղված լինի անձի սոցիալական վերաինտեգրմանը, կրկնահանցագործության ռիսկերի նվազեցմանը և հասարակության անվտանգությանը»:

Այս համատեքստում անհրաժեշտ է միաժամանակ զարգացնել երեք փոխկապակցված ուղղություն.

1) ծառայությունների ավելի հստակ արտացոլում բյուջետային և ծրագրային փաստաթղթերում,
2) չափելի արդյունքային մոտեցումների կիրառում,
3) ծառայությունների պատվիրակման թափանցիկ ու հաշվետու մեխանիզմների զարգացում:

Այսպիսով, սույն համառոտագրի նպատակն է առաջարկել ռազմավարական և բյուջետային այնպիսի ուղղություններ, որոնք կարող են ներառվել 2027–2029 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրում, տարեկան պետական բյուջեի պլանավորման գործընթացում, ինչպես նաև քրեակատարողական և պրոբացիայի ոլորտների նոր ռազմավարական ծրագրում:

Այն հասցեագրված է հետևյալ կառույցներին և կազմակերպությունների.

1. *ՀՀ արդարադատության նախարարություն,*
2. *ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն,*
3. *ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայություն*
4. *ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանումներ,*
5. *Արդարադատության ոլորտում գործունեություն ծավալող այլ պետական մարմիններ և ոչ պետական, հասարակական կազմակերպություններ, կառույցներ:*

Միջազգային չափանիշների հիմնական ուղերձը. *ՄԱԿ-ի Nelson Mandela Rules-ը և Եվրոպայի խորհրդի Prison/Probation Rules-ը վերականգնողական և սոցիալական վերաինտեգրման ծառայությունները դիտարկում են ոչ թե որպես լրացուցիչ աջակցություն, այլ որպես պատժի կատարման և հանրային անվտանգության արդյունավետության բաղադրիչ:*

2. ԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քրեակատարողական և պրոբացիայի ծառայություններում վերականգնողական ծառայությունները կարևոր նշանակություն ունեն անձի սոցիալական վերաինտեգրման, վերասոցիալականացման, սոցիալական կապերի վերականգնման, վարքային ռիսկերի նվազեցման և կրկնահանցագործության կանխարգելման համար: Սակայն ներկայումս ըստ մեր հետազոտությունների առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնք սահմանափակում են այս ծառայությունների արդյունավետ կազմակերպումը: Ստորև ներկայացվում են դրանցից առավել կարևոր խնդիրները, դրանց չափման ցուցանիշները՝ նաև հիմնավորված համապատասխան տվյալներով:

2.1 Ծառայությունների հասանելիության և ծածկույթի խնդիր

Քրեակատարողական և պրոբացիայի համակարգում հաճախ հասանելի չեն բավարար ծավալով նեղ և անհատականացված ծառայություններ: Սա վերաբերում է հատկապես տրավմայի, կախվածությունների, զայրույթի կառավարման, սթրեսի հաղթահարման, սուիցիդալ վարքի, ինքնավնասման ռիսկի, սոցիալական վերաինտեգրման և այլ բարձր ռիսկային կամ հատուկ մոտեցում պահանջող իրավիճակների հետ աշխատանքին: Ընդհանուր բնույթի աջակցությունը չի կարող ամբողջությամբ փոխարինել մասնագիտացված ծառայություններին:

Նեղ հոգեբանական և հոգեբուժական ծառայությունների սահմանափակ հասանելիություն

Անձանց մի հատվածի համար անհրաժեշտ են ոչ միայն ընդհանուր հոգեբանական աջակցություն, այլև ճգնաժամային միջամտություն, կլինիկական գնահատում, հոգեբուժական խորհրդատվություն, հոգեկան առողջության մշտադիտարկում և անհրաժեշտության դեպքում ուղեգրում համապատասխան հաստատություններ: Նման ծառայությունների հասանելիությունը և շարունակականությունը հաճախ սահմանափակ են: Զգացվում է հոգեբանական/հոգեբուժական ծառայությունների և մասնագիտական վերապատրաստումների պակասը:

Ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման անբավարար մեխանիզմներ

Քրեակատարողական միջավայրում և պրոբացիայի շրջանակում առկա են հոգեկան առողջության և ճգնաժամային վարքի հետ կապված բարձր ռիսկեր:

2021–2024 թվականների ընթացքում ավարտված ինքնասպանությունների թիվը մնացել է հարաբերականորեն ցածր և նվազման միտում է ունեցել՝ **2021 և 2022 թվականներին՝ 3-ական դեպք, 2023 թվականին՝ 2 դեպք, իսկ 2024 թվականին՝ 0 դեպք**: Սակայն 2025 թվականին արձանագրվել է կտրուկ աճ՝ **8 ավարտված ինքնասպանություն**, ինչը ոչ միայն գերազանցում է նախորդ բոլոր տարիների ցուցանիշները, այլ նաև փոխում է ընդհանուր ռիսկային պատկերը:

Այս տվյալները հատկապես կարևոր են, որովհետև ազատազրկված անձանց ընդհանուր թիվը նույն ժամանակահատվածում աճել է համեմատաբար աստիճանաբար՝ **2,128-ից հասնելով 2,854-ի**, մինչդեռ ավարտված ինքնասպանությունների թիվը 2025 թվականին աճել է անհամաչափ՝ հասնելով վերջին հինգ տարիների առավել բարձր մակարդակին:

Այս աճը հատկապես մտահոգիչ է այն պայմաններում, երբ ինքնասպանության փորձերի թիվը, ըստ հաշվետվությունների տրամաբանության, հիմնականում մնացել է մեկից երկու տասնյակի շրջանակում՝ կախված նրանից՝ հաշվարկվում են դեպքերը, թե փորձ կատարած անձինք: Ուստի 2025 թվականի ցուցանիշը պետք է դիտարկել ոչ միայն որպես քանակական աճ, այլև որպես հնարավոր ինստիտուցիոնալ ազդակ՝ կապված ռիսկերի վաղ հայտնաբերման, հոգեբանական աջակցության, միջգերատեսչական արձագանքի և ՔԿՀ-ներում առօրյա վերահսկողության ու դինամիկ անվտանգության արդյունավետության հետ:

Հետևաբար, ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելումը պահանջում է ոչ միայն դեպքերի արձագանքում, այլ նաև վաղ հայտնաբերում, ռիսկի գնահատում, մասնագիտացված միջամտություն, հետագա ուղեկցում և համակարգված համագործակցություն մասնագետների միջև:

Ավելին ըստ պաշտոնական տեղեկատվության, աճել են նաև ինքնասպանության փորձերը: 2024-2025.թ.թ. համեմատությունը ցույց է տալիս համապատասխանաբար 19 և 46 դեպքերի գրանցում, այսինք ավելի քան կրկնակի աճ: Շարունակում է մտահոգիչ մնալ նաև հացադուլ հայտարարած դեպքերի թիվը, համապատասխանաբար՝ 471 և 329:

Աղյուսակ 1. Ոլորտի հիմնական ցուցանիշներ

	2025	**2024**	**2023**
Ցուցանիշներ	2025թ.	2024թ.	2023թ.
Կալանավորված անձանց և դատապարտյալների ընդհանուր թիվ	2,854՝ 01.01.2026-ի դրությամբ	2,686՝ 01.01.2025-ի դրությամբ	մոտ 2,453 տարեկան տվյալով
Կալանավորված անձինք	1,392	1,401	1,341
Դատապարտյալներ	1,462	1,285	1,112
Ինքնասպանության դեպքեր ՔԿՀ-ներում	8 դեպք	0 դեպք	2
Ինքնավնասման / ինքնախեղման դեպքեր	617 դեպք՝ 183 անձի կողմից	-	-
Բյուջետային ծավալներ	վերջնական փաստացի տարեկան ծախսը պետք է ճշտել բյուջեի կատարման աղբյուրով	շուրջ 14 մլրդ դրամ՝ «Քրեակատարողական ծառայությունների» ծրագրով	ամբողջական համադրելի թիվը չհաստատվեց, բայց 2024-ի հիմնական միջոցառման ծախսը 2023-ից ավել է եղել 320.3 մլն դրամով

Հոգեկան առողջության վիճակագրություն խնդիրներ

Հոգեկան առողջության մասով հասանելի հրապարակումներում ավելի շատ ներկայացված են ոչ թե ամբողջական տարեկան վիճակագրական շարքեր, այլ համակարգային խնդիրներ. օրինակ՝ 2025-ի վերաբերյալ նշվել է, որ հոգեկան առողջության խնդիրների դեպքում միշտ չէ, որ ապահովվել է հոգեբույժի մասնակցությունը, իսկ որոշ դեպքերում չեն կատարվել ախտորոշման և բուժման վերաբերյալ անհրաժեշտ գրառումներ: Առանձին հրապարակման մեջ նշվում է նաև հոգեբանական ծառայությունների ծանրաբեռնվածությունը. օրինակ՝ 2025թ. ապրիլի 30-ի

դրությամբ «Արմավիր» ՔԿՀ-ում պահվել է 1,075 անձ և գործել է 3 հոգեբան, իսկ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում՝ 556 անձ և 2 հոգեբան:

Կրկնահանցագործություն

Ոլորտի տարեկան հաշվետվությունները չեն ներկայացնում կրկնահանցագործության տոկոսային ցուցանիշ 2Ընդհանուր առմամբ նախկինում դատված անձանց կողմից կատարվել է 143 հանցագործություն, սակայն սա պետք է զգուշությամբ օգտագործել, քանի որ այն պարտադիր չէ, որ նույնական լինի «կրկնահանցագործության մակարդակ» կամ «recidivism rate» ցուցանիշին: Կառավարության հաշվետվական նյութերում նաև նշվում է, որ 2024-ին քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում գնահատվել են կրկնահանցագործություն կատարած 200 անձ և առաջին անգամ հանցագործություն կատարած անձինք:

Բյուջետային ծավալներ

2024 թվականի համար «Քրեակատարողական ծառայությունների» ծրագրի փաստացի ծախսերը կազմել են շուրջ 14 մլրդ դրամ, կամ ծրագրված ցուցանիշի 99.1%: Դրանից 12.4 մլրդ դրամը ուղղվել է հիմնական «Քրեակատարողական ծառայություններ» միջոցառմանը, իսկ շենքային պայմանների բարելավման նպատակով տրամադրվել է 55.8 մլն դրամ: 2024 թվականի պլանային բյուջեով նույն ծրագրի ֆինանսավորման ծավալը նշվել էր 13.8 մլրդ դրամ:

Այս խնդիրների շարունակական բնույթը ցույց է տալիս, որ դրանց համար կիրառվող լուծումները դեռևս չեն կարողանում հասցեագրել առկա բացերը՝ վեր հանելով ծառայությունների որակի, շարունակականության, մասնագիտական կազմի հարցերը:

2.2 Ծառայությունների շարունակականության խնդիր

Աշխատակիցների նեղ մասնագիտական աջակցության և վերապատրաստման պակաս

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի աշխատակիցները նույնպես կարիք ունեն նեղ մասնագիտական աջակցության, վերապատրաստման և գործիքների՝ հոգեկան առողջության խնդիրների, ճգնաժամային վարքի, ինքնասպանությունների և ինքնավնասումների ռիսկերի, վերականգնողական մոտեցումների և բարդ դեպքերի կառավարման հարցերում: Սա վերաբերում է ոչ միայն ընդհանուր վերապատրաստումներին, այլև շարունակական մասնագիտական ուղեկցմանը: Վերականգնողական ծառայությունների ամենախոցելի հատվածներից մեկն անցումային փուլն է՝ նախաազատման և ազատ արձակումից կամ վերահսկվող միջավայրից համայնք վերադարձի շրջանը: Հաճախ ծառայությունները չեն կապվում միմյանց հետ, և շահառուն դուրս է մնում աջակցությունից հենց այն պահին, երբ առավել մեծ է սոցիալական, հոգեբանական և վարքային ռիսկը:

Ազատազրկվածների մասնագիտական վերապատրաստումների անբավարար զարգացում

Վերաինտեգրումը հնարավոր չէ առանց հմտությունների, աշխատանքի պատրաստվածության և հետագա զբաղվածության իրական հեռանկարների: Մասնագիտական վերապատրաստումները, զբաղվածությանն ուղղված ուղեկցումը և աշխատաշուկային նախապատրաստող ծառայությունները, մեր դիտարկումներով, հաճախ ունեն սահմանափակ ծավալ կամ չեն դիտարկվում որպես վերականգնողական քաղաքականության պարտադիր բաղադրիչ:

2.3 Ֆինանսավորման և բյուջետային տեսանելիության խնդիր

Բյուջետային և ծրագրային փաստաթղթերում միշտ չէ, որ հնարավոր է հստակ հասկանալ՝ ինչ ծառայություններ են ֆինանսավորվում, որ շահառուներին են ուղղված, ինչ ծավալ ունեն, ինչ արդյունքներ պետք է ապահովեն և ինչպես են գնահատվելու: Արդյունքում դժվարանում է թե՛ պլանավորումը, թե՛ հաշվետվողականությունը, թե՛ արդյունավետության գնահատումը: Առկա չէն, նաև արդյունքային ցուցանիշներ, մշտադիտարկման գործիքակազմեր:

2.4 Կառավարման, պատվիրակման և որակի վերահսկման խնդիր

Ծառայությունների արդյունքների չափման և տեսանելիության պակաս

Որոշ ծառայություններ իրենց բնույթով պահանջում են միջգերատեսչական և համայնքային ռեսուրսների ներգրավում, և պետությունը պետք է մնա քաղաքականության, ստանդարտների, ֆինանսավորման և վերահսկողության պատասխանատուն, հատկապես երբ նեղ մասնագիտական ծառայությունների կազմակերպումը պահանջում է թե՛ մարդկային ռեսուրսների, թե՛ գործառութային առաջնահերթությունների, թե՛ մասնագիտական կարողությունների շատ բազմազան և ճկուն մոտեցումներ՝ սահմանափակության պատճառով: Հենց այստեղ է առաջնային դառնում պատվիրակման կարիքը: Պետական մարմինները ապահովում են ծառայությունների հասանելիության, որակի, ֆինանսավորման և վերահսկողության հիմնական դերակատարությունը իրենց հստակ լիազորություններով, իսկ պատվիրակումը դիտարկվում է որպես մասնագիտացված կարողությունների ներգրավման և ծառայությունների ծածկույթի ընդլայնման մեխանիզմ:

Համայնքային և ՔՀԿ ներուժի ոչ լիարժեք օգտագործում

Մասնագիտացված քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (այսուհետ՝ ՔՀԿ-ներ), համայնքային խմբերը և համապատասխան փորձ ունեցող այլ կառույցներ հաճախ ունեն վերականգնողական, հոգեբանական, սոցիալական և վերաինտեգրման ուղղություններով գործնական փորձ, ճկունություն և տեղային հասանելիություն: Սակայն նրանց ներուժը համակարգային ձևով չի օգտագործվում ծառայությունների մատուցման մեջ: Չափանիշների սահմանմամբ ՔԿՀ-ները կարող են իրենց ներուժը նպատակաուղղել համակարգում ծառայությունների իրականացմանը: Այդ չափանիշները կարող են ներառել մասնագիտական փորձ, անձնակազմի որակավորում, անվտանգություն, գաղտնիություն, էթիկա, տվյալների պաշտպանություն, հաշվետվողականություն:

3. ԻՆՉՈՒ՞ Է ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒՄԸ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԼՈՒԾՈՒՄ

Վերականգնողական ծառայությունների կայուն ֆինանսավորման և պատվիրակման անհրաժեշտությունը հիմնավորվում է միաժամանակ երեք մակարդակով՝ ազգային բյուջետային տվյալներով, Եվրոպայի խորհրդի համեմատական վիճակագրությամբ և միջազգային չափանիշներով:

Տվյալ / աղբյուր	Ինչ է ցույց տալիս	Քաղաքականության հետևություն
ՀՀ արդարադատության ոլորտի 2025թ. բյուջեի վերլուծություն	«Քրեակատարողական ծառայություններ» ծրագիրը կազմում է ԱՆ բյուջեի հիմնական մասը՝ շուրջ 14.8 մլրդ դրամ կամ 62.23%, իսկ Պրոբացիայի ծառայություններին ուղղված բաժինը ներկայացված է առանձին ենթատողով:	Բյուջետային փաստաթղթերում անհրաժեշտ է առանձնացնել նաև վերականգնողական/վերաինտեգրման ծառայությունների հատուկ ենթամիջոցառումներ և ցուցիչներ:
Եվրոպայի խորհուրդ, SPACE I 2025	Հայաստանի համար նշվում է 2,686 անձ քրեակատարողական համակարգում և 4,491 տեղ ընդհանուր կարողություն, prison density՝ 59.8 անձ 100 տեղի հաշվով:	Խնդիրը ոչ միայն տեղային կարողությունն է, այլ ծառայությունների բովանդակությունը, ծածկույթը և արդյունքային կառավարումը:
Եվրոպայի խորհուրդ, SPACE II 2024	Հայաստանի վերաբերյալ նշվում է, որ Պրոբացիայի ծառայության տարեկան բյուջեի ցուցանիշը հասանելի չէ SPACE II հաշվետվության տվյալային աղյուսակում:	Պրոբացիայի բյուջետային և ծառայությունների ցուցիչների ավելի հստակ հրապարակայնությունը կարող է ուժեղացնել հաշվետվողականությունը:
ԱՀԿ/Եվրոպա, Prison Health Status Report 2022	Բանտային առողջության համակարգերում շարունակական խնամքը և հոգեկան առողջության աջակցությունը ներկայացվում են որպես ներդրում պահանջող ուղղություններ:	Վերականգնողական ծառայությունների փաթեթում պետք է ներառել ճգնաժամային արձագանք, հոգեկան առողջության և համայնք վերադարձի շարունակական աջակցություն:
ՄԱԿ Թմրամիջոցների և հանցավորության դեմ գրասենյակ (UNODC)	UNODC-ը վերաինտեգրման և ռեցիդիվի կանխարգելման ծրագրերը դիտարկում է որպես բանտերի ծանրաբեռնվածության և կրկնահանցագործության նվազեցման ռազմավարական գործիք:	Ծառայությունների պատվիրակումը պետք է կապել ռիսկերի/կարիքների գնահատման, անհատական պլանի և հետագա մշտադիտարկման հետ:

Այս տվյալները ցույց են տալիս, որ խնդիրը միայն ֆինանսավորման ընդհանուր չափը չէ: Առավել կարևոր է, թե ինչ չափով են վերականգնողական ծառայությունները տեսանելի

որպես առանձին պետական պարտավորություն, ինչ չափով են դրանք հասանելի տարբեր շահառուների համար, և ինչ ցուցիչներով է չափվում դրանց արդյունքը:

Ծառայությունների պատվիրակումը հնարավորություն է տալիս պետական համակարգի շրջանակում կազմակերպել այնպիսի ծառայություններ, որոնք պահանջում են նեղ մասնագիտացում, ճկունություն, համայնքային կապեր կամ առանձին մեթոդաբանություն: Պատվիրակման միջոցով հնարավոր է ներգրավել այն կազմակերպություններին, որոնք արդեն ունեն ոլորտային փորձ, [վերա]պատրաստված մասնագետներ և շահառուների հետ աշխատանքի կիրառելի գործիքներ:

Այս մոտեցումը կարող է օգտակար լինել հատկապես հետևյալ խնդիրների լուծման համար.

Առաջին՝ այն հնարավորություն է տալիս լրացնել մասնագիտացված ծառայությունների պակասը՝ հոգեբանական, հոգեկան առողջության ոլորտում մասնագիտական ծառայությունների, սոցիալական, վերականգնողական և համայնքային վերաինտեգրման ուղղություններով:

Երկրորդ՝ այն կարող է օգնել ծառայությունների շարունակականության ապահովմանը՝ հատկապես քրեակատարողական հիմնարկից կամ պրոբացիայից համայնք անցնելու փուլում, երբ անհրաժեշտ է կապել պետական և համայնքային ռեսուրսները:

Երրորդ՝ այն կարող է մեծացնել ծառայությունների ծածկույթը՝ հատկապես այն դեպքերում, երբ պետական ռեսուրսները սահմանափակ են, իսկ կարիքները՝ բազմազան և ինտենսիվ:

Չորրորդ՝ ճիշտ կառուցված պատվիրակումը կարող է բարձրացնել հաշվետվողականությունը և արդյունքների չափելիությունը, եթե այն հիմնված է հստակ ծառայությունների փաթեթների, որակի նվազագույն պահանջների, արդյունքային ցուցիչների և վերահսկման մեխանիզմների վրա:

Հինգերորդ՝ ծառայությունների պատվիրակումը հնարավորություն է տալիս ավելի լիարժեք օգտագործել համայնքային և ՔՀԿ-ների ներուժը՝ վերականգնողական ծառայությունները դարձնելով ոչ միայն ներհամակարգային, այլև համայնքակենտրոն և վերաինտեգրման նպատակին ծառայող:

Միաժամանակ կարևոր է ընդգծել, որ պատվիրակումը ինքնին վերջնական լուծում չէ: Այն կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ իրականացվում է հստակ չափանիշներով, թափանցիկ ընթացակարգերով, որակի վերահսկման մեխանիզմներով և արդյունքների գնահատման գործիքներով:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն փաստաթուղթն առաջարկում է վերականգնողական ծառայությունների պատվիրակման պիլոտ փորձարկում՝ ըստ պատճառահետևանքային շղթայի՝

- Իրավական և բյուջետային հիմքերի ձևավորում, պատվիրակման մեխանիզմի ընտրություն և գործարկում:
- Վերականգնողական և վերասոցիալականացման ծառայությունների փաթեթի մշակում:
- Որակի վերահսկում, տվյալներ և կարողությունների զարգացում:

Իրավական և բյուջետային հիմքերի ձևավորում, պատվիրակման մեխանիզմի ընտրություն և գործարկում

Անհրաժեշտ է, որպեսզի քրեակատարողական և պրոբացիայի ոլորտների համապատասխան ռազմավարական ծրագրում, բյուջետային և ծրագրային փաստաթղթերում վերականգնողական ծառայությունները ներկայացվեն որպես հստակ տեսանելի ուղղություններ: Մասնավորապես, նշված վերանայումները պետք է ներառեն, թե ինչ ծառայություններ են պլանավորվում, ինչ շահառուների են ուղղված, ինչ ծավալով են տրամադրվելու և ինչ արդյունքներ պետք է ապահովվեն:

Առաջարկ 1. Օրենսդրությամբ սահմանել վերականգնողական և վերասոցիալականացման ծառայությունների ապահովման պարտավորությունը,

Առաջարկ 2. Վերլուծել ծառայությունների պատվիրակման իրավական և պայմանագրային մեխանիզմները, այդ թվում՝ դրամաշնորհի հայտարարում, ծառայությունների մատուցում, գնման մրցույթի հայտարարում և այլն, համապատասխանաբար ներդնել առավել օպտիմալ լուծումները՝ նաև հաշվի առնելով ՀՀ այլ գերատեսչությունների, այդ թվում՝ ՀՀ ԱՍՀՆ և ՀՀ ԿԳՄՍ փորձառությունը,

Առաջարկ 3. Սահմանել վերականգնողական ծառայությունների շրջանակը, նկարագիրը, ծածկույթը հստակ սահմանել բյուջետային և ծրագրային փաստաթղթերում՝ նախատեսելով պատվիրակված ծառայությունների ֆինանսավորման հատուկ կամ պիլոտային բյուջետային տող: Մասնավորապես՝ օրինակ, 2027–2029 թվականների ՄԺԾԾ-ի և 2027 թվականի պետական բյուջեի նախագծի շրջանակում նպատակահարմար է նախատեսել առանձին միջոցառում կամ ենթամիջոցառում՝ քրեակատարողական և պրոբացիայի համակարգերում վերականգնողական և վերաինտեգրման ծառայությունների ֆինանսավորման, փորձնական պատվիրակման և արդյունքների գնահատման համար:

Քրեակատարողական ոլորտի համար ըստ քննարկումների առաջարկվող ծառայությունների շրջանակ և ցուցանիշներ

Ծառայության ուղղություն	Բովանդակություն	Չափելի ցուցանիշի օրինակ
Հոգեբանական և հոգեկան առողջության	Գնահատում, խորհրդատվություն, ճգնաժամային արձագանք,	Ծառայություն ստացած անձանց թիվ, ուղղորդումների թիվ,

աջակցություն	ուղեգրում և շարունակական հետևում	ավարտված անհատական պլանների թիվ
Վարքային և ռիսկերի նվազեցման ծրագրեր	Ձայրույթի կառավարում, կախվածությունների և բռնության կանխարգելման ծրագրեր, սոցիալական հմտություններ	Ծրագրին մասնակցած անձանց թիվ, ավարտման տոկոս, ռիսկի վերագնահատման արդյունք
Սոցիալական վերաինտեգրում	Փաստաթղթավորում, ընտանիքի հետ կապեր, համայնքային ծառայությունների հետ կապ, սոցիալական դեպքի վարում	Համայնքային ծառայություններին կապակցված անձանց թիվ, դեպքի փակման արդյունքներ
Կրթություն, մասնագիտական պատրաստում և զբաղվածություն	Մասնագիտական ուսուցում, աշխատանքային հմտություններ, գործատուների հետ կապ	Վերապատրաստված անձանց թիվ, հավաստագիր ստացածների տոկոս, աշխատանքի/պրակտիկայի կապեր
Նախաազատման և հետազատման ուղեկցում	ՔԿՀ-պրոբացիա-համայնք փոխանցում, անհատական պլանի շարունակականություն, ուղեկցում ազատ արձակումից հետո	Նախաազատման պլանների թիվ, հետազատման աջակցության դեպքերի թիվ, կրկնակի կարիքների ուղղորդում

<u>Պրոբացիայի ծառայությունում շահառուների համար առաջարկվող ծառայությունների շրջանակ և ցուցանիշներ</u>

Ծառայության ուղղություն	Բովանդակություն	Չափելի ցուցանիշի օրինակ
Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց վերահսկման ծառայություն	Վարելու իրավունքից զրկված անձանց վերահսկում, պարտավորությունների կատարման մշտադիտարկում, վարքագծային ռիսկերի գնահատում, կանխարգելիչ խորհրդատվություն և իրավական հետևանքների պարզաբանում	Վերահսկվող անձանց թիվ, խախտումների արձանագրված դեպքերի թիվ, անհատական վերահսկման պլանների թիվ, կրկնակի խախտումների նվազման ցուցանիշ
Հաշտարարության մասնագիտական ծառայություն	Տուժողի և իրավախախտում կատարած անձի միջև վերականգնողական հաղորդակցության կազմակերպում, հաշտարարության գործընթացի վարում, համաձայնությունների ձևավորում և դրանց կատարման հետևում	Իրականացված հաշտարարության դեպքերի թիվ, ձեռք բերված համաձայնությունների թիվ, կատարված համաձայնությունների տոկոս, գործընթացին մասնակցած անձանց թիվ
Փափուկ հմտությունների դասընթացներ	Հաղորդակցման, կոնֆլիկտների կառավարման, ինքնակարգավորման, պատասխանատվության, որոշումների կայացման, աշխատանքային վարքագծի և սոցիալական հմտությունների	Դասընթացին մասնակցած անձանց թիվ, դասընթացն ավարտածների տոկոս, նախնական և վերջնական գնահատման արդյունքներ, անհատական զարգացման պլանների թիվ

Ծառայության ուղղություն	Բովանդակություն	Չափելի ցուցանիշի օրինակ
	զարգացում	
Աշխատանքի և զբաղվածության ծառայություն	Զբաղվածության կարիքների գնահատում, մասնագիտական կողմնորոշում, աշխատանք փնտրելու հմտությունների զարգացում, գործատուների հետ կապի ապահովում, աշխատանքի կամ պրակտիկայի հնարավորությունների ուղղորդում	Զբաղվածության ծառայություն ստացած անձանց թիվ, գործատուներին ուղղորդված անձանց թիվ, աշխատանքի կամ պրակտիկայի տեղավորվածների թիվ, կազմված CV-ների և անհատական զբաղվածության պլանների թիվ

Առաջարկ 4. Սահմանել չափելի արդյունքային և ծածկույթի ցուցիչներ

Ծրագրային և բյուջետային պլանավորման մեջ անհրաժեշտ է ներառել այնպիսի ցուցիչներ, որոնք կարտացոլեն ոչ միայն իրականացվող գործողությունները, այլև ծառայություններից օգտվող անձանց թիվը, ծառայությունների հասանելիությունը, ճգնաժամային դեպքերի հետ աշխատանքի ծավալը, վերապատրաստումների ընդգրկումը, համայնքային վերաինտեգրման ընթացքը և այլ չափելի արդյունքներ:

Կարևոր սահմանափակում. *Պատվիրակումը ինքնին լուծում չէ, եթե չկա հստակ ծառայության նկարագիր, որակի չափանիշ, տվյալների հավաքագրում և վերահսկողություն: Ուստի առաջին փուլում պետք է փորձարկել պիլոտային մոդել՝ սահմանափակ ծառայությունների փաթեթով և չափելի ցուցիչներով:*

<u>Վերականգնողական և վերասոցիալականացման ծառայությունների փաթեթի մշակում</u>

Առաջարկ 5. Սահմանել վերականգնողական ծառայությունների նվազագույն փաթեթ՝ ներառելով այնպիսի հարցեր, որոնք կհստակեցնեն՝

- Ո՞ր ծառայություններն են ենթակա պատվիրակման,
- Ի՞նչ չափանիշներով են ընտրվելու քաղաքացիական հասարակության կազմակերպությունները,
- Ի՞նչ որակի պահանջներ պետք է պահպանվեն,
- Ի՞նչպես է իրականացվելու պայմանագրերի կառավարումը,
- Ի՞նչ եղանակով են չափվելու արդյունքները:

Նվազագույն առաջնահերթ ծառայությունների փաթեթը կարող է ներառել՝

1. Հոգեբանական և հոգեկան առողջության ծառայություններ. հոգեբանական աջակցություն, ճգնաժամային միջամտություն, հոգեբուժական գնահատում և

ուղեգրում, ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման մասնագիտացված միջամտություններ:

2. Վարքաբանական և ռիսկերի նվազեցման ծրագրեր. զայրույթի կառավարում, կախվածությունների հետ աշխատանք, բռնության կանխարգելում, սուիցիդալ և ինքնավնասման ռիսկերի կառավարում:

3. Սոցիալական վերաինտեգրման ծառայություններ. փաստաթղթավորում, բնակարանային հարցերի աջակցություն, ընտանեկան կապերի վերականգնում, համայնքային ծառայությունների հետ կապ:

4. Կրթություն, մասնագիտական պատրաստում և զբաղվածություն. մասնագիտական ուսուցում, աշխատանքային հմտություններ, աշխատաշուկայի հետ կապ:

5. Նախաազատման և հետազատման ուղեկցում. քրեակատարողական հիմնարկ–պրոբացիա–համայնք համագործակցություն, դեպքի վարում, սոցիալական ուղեկցում, դեպքի շարունակական աջակցություն, համայնքային վերաինտեգրման ծառայություններ:

6. Մասնագիտական վերապատրաստում և զբաղվածությանն ուղղված աջակցություն, մասնագիտական ուսուցում, աշխատանքային հմտություններ, աշխատաշուկայի հետ կապ:

Որակի վերահսկում, տվյալներ և կարողությունների զարգացում

Ծառայությունների որակի վերահսկումը և տվյալների շարունակական հավաքագրումն ու մշտադիտարկումը ծառայությունների շարունակականության և արդյունավետության կարևոր բաղադրիչներից են: Միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ ծառայությունների շարունակական մշտադիտարկումը հնարավորություն է տալիս ստանալ հավաստի փաստահեն տվյալներ՝ հասկանալու և չափելու յուրաքանչյուր միջամտության կամ ծրագրի արդյունավետության մակարդակը, ազդեցությունը և դրա բարելավման ուղիները:

Առաջարկ 6. Ներդնել մշտադիտարկման համակարգ

Մշտադիտարկումը հնարավորություն կտա շարունակաբար տվյալներ հավաքել իրականացվող ծրագրերի մասին՝ այդ թվում ներառելով ծառայություն ստացած անձանց թիվը, հաջողության արդյունքը՝ ըստ ներդրված սանդղակի կամ չափման միավորի, ռիսկերի նվազեցման արդյունքները և այլն:

Առաջարկ 7. Ապահովել աշխատակիցների նեղ մասնագիտական կարողությունների զարգացում

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի աշխատակիցների համար անհրաժեշտ է նախատեսել շարունակական վերապատրաստումներ և մասնագիտական աջակցություն, հատկապես՝ հոգեկան առողջության, ճգնաժամային արձագանքման, սուիցիդալ և ինքնավնասման ռիսկերի գնահատման, վերականգնողական մոտեցումների և համագործակցային դեպքի կառավարման ուղղություններով: Այս մոտեցումը նաև հնարավորություն կտա զուգահեռ զարգացնել պատվիրակված ծառայությունների որակը՝

ապագայում դիտարկելով նա կազմակերպությունների և ծառայությունների հավաստագրումը:

Առաջարկ 8. 3-5 տարվա արդյունքում ձեռք բերված տվյալների հիման վրա հավաստագրել պիլոտավորված ծառայությունները և ծրագրերը, հաստատել որակի չափորոշիչներն ու իրականացման կարգը

Միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ կայուն իրականացվող ծրագրերը միջազգային մեծ նշանակություն ունեն և հնարավորություն են տալիս համակարգին ներկայացնել իր ձեռքբերումներով, փաստահեն մոտեցումներով և կայուն արդյունավետությամբ:

5. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առաջարկվող մոտեցումների ընդունման և աստիճանական ներդրման դեպքում հնարավոր կլինի.

- բարձրացնել վերականգնողական ծառայությունների ֆինանսավորման տեսանելիությունը և կանխատեսելիությունը,
- դարձնել ծառայությունները ավելի հասցեական, չափելի և հաշվետու,
- մեծացնել նեղ մասնագիտացված ծառայությունների հասանելիությունը,
- ուժեղացնել ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման համակարգը,
- բարելավել հոգեբանական, հոգեբուժական և սոցիալական աջակցության կազմակերպումը,
- ընդլայնել մասնագիտական վերապատրաստման և վերաինտեգրման հնարավորությունները,
- ավելի արդյունավետ օգտագործել ՔՀԿ-ների և համայնքային կառույցների ներուժը,
- բարձրացնել պետական համակարգի արդյունավետությունը՝ մասնագիտական բեռի ավելի նպատակային բաշխման միջոցով,
- ուժեղացնել աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությունը բարձր ռիսկային և բարդ դեպքերի կառավարման հարցերում:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերականգնողական ծառայությունները պետք է դառնան արդարադատության ոլորտի բյուջետային և քաղաքական պլանավորման կարևոր և տեսանելի բաղադրիչ: Դրանք չեն կարող մնալ միայն ծրագրային կամ դոնորային աջակցությամբ պահպանվող ուղղություններ, եթե պետության նպատակն է ապահովել արդյունավետ վերաինտեգրում, կրկնահանցագործության նվազեցում, մարդու իրավունքների պաշտպանություն և հանրային անվտանգության ամրապնդում:

Վերականգնողական և վերաինտեգրման ծառայությունների կայուն ֆինանսավորումը պետք է դիտարկվի ոչ թե որպես լրացուցիչ սոցիալական աջակցություն, այլ որպես քրեական արդարադատության արդյունավետության, կրկնահանցագործության նվազեցման, մարդու իրավունքների պաշտպանության և հանրային անվտանգության կարևոր բաղադրիչ:

Այդ նպատակով անհրաժեշտ է, որ ՀՀ արդարադատության նախարարությունը, Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայությունները, ֆինանսների նախարարությունը և քաղաքացիական հասարակության մասնագիտացված կառույցները համատեղ մշակեն վերականգնողական ծառայությունների նվազագույն փաթեթ, բյուջետային տեսանելիության մեխանիզմներ և ծառայությունների պատվիրակման թափանցիկ ընթացակարգեր:

Այս համատեքստում ծառայությունների պատվիրակման թափանցիկ և հաշվետու մեխանիզմների զարգացումը, նեղ մասնագիտացված ծառայությունների հասանելիության մեծացումը և բյուջետային փաստաթղթերում դրանց ավելի հստակ արտացոլումը կարող են դառնալ գործնական քայլեր՝ համակարգային փոփոխությունների ուղղությամբ:

Սույն քաղաքականության համառոտագիրը կոչ է անում ՀՀ արդարադատության նախարարությանը և մյուս շահագրգիռ կառույցներին դիտարկել վերականգնողական ծառայությունների ֆինանսավորման և կազմակերպման հարցը որպես ոլորտային բարեփոխումների առաջնահերթ ուղղություն և ձեռնարկել համատեղ քայլեր՝ պետական, համայնքային և քաղաքացիական հասարակության ներուժի ավելի արդյունավետ ներգրավման և համադրման ուղղությամբ: Առաջնահերթ քայլ կարող է լինել 2027–2029 թվականների ՄԺԾԾ-ի և 2027 թվականի պետական բյուջեի շրջանակում վերականգնողական և վերաինտեգրման ծառայությունների փորձնական ֆինանսավորման ու պատվիրակման մոդելի ներառումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

[1] ՀՀ արդարադատության նախարարի N 627-L հրաման, «ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2024-2026 թվականների գործունեության հիմնական ուղղությունները և դրանց իրականացման ժամանակացույցը սահմանելու մասին», 20.10.2023. https://moj.am/legal/view/article/1715/

[2] ՀՀ ֆինանսների նախարարություն, «Պետական բյուջե 2025թ.»՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենք, հավելվածներ և բացատրագիր. https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t

[3] ՀՀ արդարադատության նախարարություն, «Բյուջե և վիճակագրություն» բաժին՝ ՄԺԾԾ և բյուջետային հայտեր. https://moj.am/page/statistics/p/2

[4] Տնտեսական իրավունքի կենտրոն, «Արդարադատության ոլորտի 2025թ. բյուջեի վերլուծություն», 2025. https://budgets.am/wp-content/uploads/2025/02/%D4%B1%D6%80%D5%A4%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF%D5%AB-2025%D5%A9-%D5%A2%D5%B5%D5%B8%D6%82%D5%BB%D5%A5%D5%AB-%D5%BE%D5%A5%D6%80%D5%AC%D5%B8%D6%82%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6_%D5%B0%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%BF%D5%BE%D5%A1%D5%AE_22.02.2025_FIN.pdf

[5] Council of Europe / University of Lausanne, SPACE I 2025 - Council of Europe Annual Penal Statistics: Prison populations, 2026. https://wp.unil.ch/space/files/2026/05/260518_rapport-space-i-2025.pdf

[6] Council of Europe / University of Lausanne, SPACE II 2024 - Persons under the supervision of probation agencies, 2025. https://wp.unil.ch/space/files/2025/11/space-ii_report-2024_251105.pdf

[7] Council of Europe, Key Council of Europe Conventions and Recommendations, European Prison Rules and Probation Rules. https://www.coe.int/en/web/prison/conventions-recommendations

[8] Council of Europe, Strengthening the Probation Service in Armenia, Action Plan for Armenia 2023-2026. https://www.coe.int/en/web/cooperation-in-police-and-deprivation-of-liberty/strengthening-the-probation-service-in-armenia

[9] Council of Europe CPT, Armenia country page and 2023 periodic visit report information. https://www.coe.int/en/web/cpt/armenia

[10] UNODC, The Nelson Mandela Rules: What do they say? https://www.unodc.org/unodc/en/justice-and-prison-reform/nelsonmandelarulescontent.html

[11] UNODC, Introductory Handbook on the Prevention of Recidivism and the Social Reintegration of Offenders. https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/crimeprevention/Introductory_Handbook_on_the_Prevention_of_Recidivism_and_the_Social_Reintegration_of_Offenders.pdf

[12] UNODC, Model strategies on reducing reoffending, 2024 draft. https://www.unodc.org/res/justice-and-prison-reform/cpcj-model-strategies-on-reducing-reoffending_html/2420219E.pdf

[13] WHO Regional Office for Europe, Status report on prison health in the WHO European Region 2022. https://www.who.int/europe/publications/i/item/9789289058674

[14] United Nations in Armenia, Committee against Torture dialogue with Armenia, 2025. https://armenia.un.org/en/293253-experts-committee-against-torture-commend-armenia-proactively-addressing-issues-prisons

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1) «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ (*ՔՀԻ*)

- **Հասցե՝** ՀՀ, ք. Երևան 0091, Զաքարիա Քանաքեռցու փ. 117/2, շենք 39 **Հեռախոս՝** +374 94 807 807
- **Էլ. հասցե՝** csi@csi.am
- **Վեբ կայք՝** www.csi.am

2) «Սոցիալական արդարություն» ՀԿ / «Ջուրեմոնիա» հարթակ

- **Հասցե՝** ՀՀ, ք. Երևան 0023, Արշակունյաց պող. 2, գրասենյակներ 303–305
- **Հեռախոս՝** +374 (99) 051 314
- **Էլ. հասցե՝** info.sjngo@gmail.com
- **Վեբ կայք/հարթակ՝** Juremonia.am